ՀՀ վարչական վերաքննիչ դատարանին

Բողոք բերող անձինք՝

սկզբնական գործով հայցվորներ

Աշոտ Մանուկի Խուդոյան

անձն.՝AF0777260, տրված՝ 24.09.2003թ., 057-ի կողմից

Հեղինե Սոսի Մակարյան

AF0695104, տրված՝ 15.10.2002թ.,051-ի կողմից

հասցե՝ ք. Վաղարշապատ, Շահումյան 27 տուն

Ներկայացուցիչներ՝

Արթուր Ալբերտի Սաքունց

անձն.՝ AM0460612, տրված՝ 05.10.2011թ., 018-ի կողմից

Անի Ժիրայրի Չատինյան

անձն.՝AG0609768, տրված՝ 15.12.2005թ., 018-ի կողմից

հասցե՝ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Գործին մասնակցող այլ անձինք՝

սկզբնական գործով պատասխանողներ

1. ՀՀ ոստիկանության պետ Վ. Գասպարյան
   հասցե՝ ք.Երևան, 0025, Նալբանդյան փ. 130
2. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության
   Արաբկիրի բաժնի պետ Գ.Ամիրխանյան
   հասցե՝ ք. Երևան, Մամիկոնյանց 1
3. ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության
   Վաղարշապատի բաժնի պետ Ա. Առաքելյան
   հասցե՝ ք. Վաղարշապատ, Կամոյի փողոց 15 շենք

ՎԵՐԱՔՆՆԻՉ ԲՈՂՈՔ

(թիվ ՎԴ/1847/0514 գործով ՀՀ վարչական դատարանի 22.04.2014թ. հայցադիմումի ընդունումը մերժելու որոշման դեմ)

ՀՀ վարչական դատարանը, նախագահությամբ դատավոր Գ. Սոսյանի, քննելով Աշոտ Խուդոյանի և Հեղինե Մակարյանի ներկայացուցիչներ Արթուր Սաքունցի և Անի Չատինյանի կողմից ներկայացված հայցադիմումը՝ ազատ տեղաշարժի, անձնական ազատության և անձեռնամխելիության իրավունքների խախտման փաստը, ոստիկանության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջներով, 2014 թվականի ապրիլի 22-ին կայացրել է որոշում «Պետական տուրքի

վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու, հայցադիմումը մասով վարույթ ընդունելու, մասով դրա ընդունումը մերժելու մասին»: Սույն վերաքննիչ բողոքը ներկայացվում է հայցադիմումի ընդունումը մի մասով մերժելու դեմ:

1. Գործի դատավարական նախապատմությունը

1.1 Աշոտ Խուդոյանը և Հեղինե Մակարյանը[1] 2013 թվականի նոյեմբերի 28-ից նստացույց են կազմակերպել ՀՀ նախագահական նստավայրի դիմաց՝ Կ.Դեմիրճյանի անվան մետրոպոլիտենի «Մարշալ Բաղրամյան» կայարանի մոտ: 2013 թվականի դեկտեմբերի 2-ին ժամը 06:15-ի սահմաններում հայցվորներին են մոտեցել մի խումբ ոստիկանության աշխատակիցներ և բարձր տոնով արթնացրել հայցվոր Ա. Խուդոյանին: Այնուհետև, բռնություն գործադրելով հայցվորների նկատմամբ, ոստիկանության աշխատակիցները նրանց և հայցվորների երեխաներին տեղափոխել են առանձին ավտոմեքենաներ ու հեռացրել նստացույցի վայրից՝ ութ ամսական երեխային թողնելով նստացույցի վայրում:

1.2 Հայցվորներին և նրանց երեխաներին ք. Վաղարշապատ տանելուց հետո Ա. Խուդոյանին ոստիկանության աշխատակիցները տեղափոխել են ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային վարչության Վաղարշապատի բաժին և առանց հիմքերի մոտ մեկ ժամ պահել իրեն տեղափոխող ոստիկանության աշխատակիցներից մեկի՝ 4-րդ հարկում գտնվող աշխատասենյակում, որից հետո նրան տեղափոխել են Շահումյան 27 հասցեում գտնող բնակարան: Խուդոյանների ընտանիքը դեկտեմբերի 2-ին գտնվել է ոստիկանության աշխատակիցների հսկողության տակ. այդպիսով խախտվել է նաև նրանց ազատ տեղաշարժի իրավունքը:

1.3 2014 թվականի մարտի 21-ին հայցվորների ներկայացուցիչներ Ա. Սաքունցը և Ա.Չատինյանը հայցադիմում են ներկայացրել ՀՀ վարչական դատարան[2]՝ ազատ տեղաշարժի, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման փաստը և ոստիկանության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջների մասին[3]: Միաժամանակ, հայցադիմումին կից ներկայացվել է միջնորդություն՝ պետական տուրքի գումարից ազատելու կամ պետական տուրքի վճարումը հետաձգելու կամ տարաժամկետելու խնդրանքի վերաբերյալ:

1.4 2014 թվականի ապրիլի 22-ին Դատարանը, ծանոթանալով հայցվորների ներկայացուցիչների կողմից ներկայացված միջնորդությանը, հայցադիմումին և դրան կից փաստաթղթերին, որոշմամբ բավարարել է պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ միջնորդությունը, հայցվորների հայցադիմումը՝ ոստիկանության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջի մասով ընդունել է վարույթ և մերժել Ա.Խուդոյանի՝ հավաքների ազատության, անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքների խախտման և Հ.Մակարյանի՝

---

[1] Այսուհետ՝ հայցվորներ
[2] Այսուհետ՝ Դատարան
[3] Տես հավելված 1՝ 15.04.2014թ. հայցադիմումի պատճեն

հավաքների ազատության, ազատ տեղաշարժի իրավունքների խախտման փաստը ճանաչելու պահանջի մասով հայցադիմումի ընդունումը[4]:

1.4 Սույն որոշումը հայցվորների ներկայացուցիչ Ա. Չատինյանը ստացել է փոստային առաքման միջոցով 2014 թվականի մայիսի 2-ին[5]:

2. Դատարանի որոշման հիմնավորումները

Դատարանը կայացրել է հայցադիմումի ընդունումը մասով մերժելու մասին որոշում՝ ներկայացնելով հետևյալ հիմնավորումները.

« (...) ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ճանաչման հայցով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, եթե նա չի կարող հայց ներկայացնել սույն օրենսգրքի 66-68-րդ հոդվածներին համապատասխան:

(...) Վերոգրյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի օրենքի ուժով իրավունք է վերապահված դիմելու ՀՀ վարչական դատարան, եթե վերջինս համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի (պաշտոնատար անձի) վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել իր՝ ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, որպիսի իրավունքի իրագործման համար նախնառաջ անհրաժեշտ է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված որևէ տեսակի հայցի ներկայացում:

Այդպիսի տեսակի հայց է նաև ճանաչման հայցը, որով հայցվորը կարող է պահանջել ճանաչել որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը: Այսինքն՝ հայցի՝ որպես ճանաչման տեսակի հայց դիտելու համար դրա առարկան պետք է լինի այն իրավահարաբերությունը, որի առկայության կամ բացակայության ճանաչումը հայցում է հայցվորը: Հետևաբար իրավահարաբերության բացակայությունը բացառում է նաև հայցի՝ որպես ճանաչման հայց դիտելու հնարավորությունը: Ուստի նման տեսակի հայցը ենթակա չէ դատարանում քննության, և ՀՀ վարչական դատարանը պարտավոր է մերժել դրա ընդունումը: Մասնավորապես՝ իրավահարաբերությունը դա այնպիսի բնույթի հարաբերություն է, որի առաջացումը, փոփոխումը կամ դադարումը կարգավորվում է իրավական նորմերով, իսկ որևէ փաստը, այդ թվում՝ իրավունքի խախտման փաստը, դա մի հանգամանք (եղելություն) է, որի ուժով էլ հենց առաջանում է իրավահարաբերությունը, և դրանք չեն կարող նույնացվել: Այսինքն՝ փաստը դա միայն իրավահարաբերության ծագման հիմքն է, և, հայցվորի պնդմամբ, դրա առկայությունը կամ բացակայությունը դեռևս չի նշանակում նաև իրավահարաբերության առկայություն կամ բացակայություն:

(...) Դատարանը գտնում է, որ հայցվորների նշված հայցապահանջը չի կարող համարվել որպես ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասով

---

[4] Տես հավելված 2՝ 22.04.2014 թվականի որոշման պատճեն

[5] Տես հավելված 3՝ փոստային ծրարի պատճեն

սահմանված ճանաչման հայց, քանի որ վերջիններս չեն պահանջում ճանաչելու որևէ իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը, այլ նրանք պահանջում են իրավունքի խախտման փաստի ճանաչում, որը սակայն նշված նորմի իմաստով չի կարող լինել ինքնուրույն ճանաչման առարկա:

Միաժամանակ, Դատարանն արձանագրում է, որ հայցվորների վերոգրյալ պահանջն ըստ էության ներառված է մյուս՝ ոստիկանության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջում՝ որպես դրա փաստական հիմք: Այսինքն՝ սույն գործով կայացվելիք դատական ակտով ոստիկանության աշխատակիցների գործողությունների ոչ իրավաչափ ճանաչումը կարող է տեղի ունենալ հացվորների իրավունքների խախտման փաստը հաստատելուց հետո միայն, ինչը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի իմաստից»[6]:

3. Վերաքննիչ բողոքի հիմքերը և հիմնավորումները

Գտնում ենք, որ Դատարանը խախտել է հայցվորների՝ ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ հոդվածներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի[7] 6-րդ հոդվածով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածով ամրագրված իրավունքները, ինչն ապացուցվում է ստորև ներկայացվող հիմնավորումներով:

3.1 ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածն ամրագրում է, որ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական, ինչպես նաև պետական այլ մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատություններն օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք», իսկ 19-րդ հոդվածը յուրաքանչյուր անձի իրավունք է վերապահում իր խախտված իրավունքները վերականգնելու, (...) համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք:

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ և անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի ա) ենթակետը սահմանում է, որ «Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ սույն օրենսգրքով սահմանված կարգով իրավունք ունի դիմելու վարչական դատարան, եթե համարում է, որ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կամ դրա պաշտոնատար անձի վարչական ակտով, գործողությամբ կամ անգործությամբ՝ խախտվել են կամ անմիջականորեն կարող են խախտվել նրա՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, օրենքներով կամ այլ իրավական

[6] Տես հավելված 2՝ 22.04.2014 թվականի որոշում, 3-4 էջեր
[7] Այսուհետ՝ կոնվենցիա

ակտերով ամրագրված իրավունքները և ազատությունները, ներառյալ, եթե՝ խոչընդոտներ են հարուցվել այդ իրավունքների և ազատությունների իրականացման համար»:

Սույն հոդվածի բովանդակությունը թույլ է տալիս պնդել, որ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից դատարան դիմելու վերջնական նպատակը անմիջականորեն իր իրավունքների և ազատությունների խախտումները վերացնելը և (կամ) դրանք վերականգնելն է կամ հնարավոր խախտումները կանխելը: Տվյալ պարագայում ՀՀ ոստիկանության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունների արդյունքում խախտվել են հայցվորների մի շարք սահմանադրական իրավունքներ: Ոստիակության աշխատակիցների ոչ իրավաչափ գործողությունները և հայցվորների իրավունքների խախտումը կախվածության մեջ են դրվում մեկը մյուսից, որը կարելի է մեկնաբանել հետևյալ կերպ՝ իրավունքների խախտումը հանգեցրել է ոչ իրավաչափ գործողությունների կամ ոչ իրավաչափ գործողությունների կատարումը հանգեցրել է հայցվորների իրավունքների խախտման: Հետևաբար, Դատարանի այն մեկնաբանությունը, որ հայցվորների՝ իրավունքների խախտման փաստի ճանաչման պահանջն ըստ էության ներառված է մյուս՝ ոստիկանության աշխատակիցների գործողությունները ոչ իրավաչափ ճանաչելու պահանջում՝ որպես դրա փաստական հիմք, հնարավոր չէ միանշանակ հաստատված համարել:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը»: Սույն հոդվածի 2-րդ մասը հստակ սահմանում է այն գործերի սպառիչ ցանկը, որոնք ընդդատյա չեն ՀՀ վարչական դատարանին: Մասնավորապես, «Վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (այսուհետ՝ սահմանադրական դատարան) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը»: Սույն օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի՝ վարչական դատարանը մերժում է հայցադիմումի ընդունումը, եթե հայցը ենթակա չէ դատարանում քննության պահանջը ենթադրում է, որ հայցադիմումի ընդունումն այդ հիմքով մերժվում է, եթե այն ընդդատյա է ՀՀ սահմանադրական դատարանին, քրեական և պատժի կատարման հետ կապված գործերով՝ ընդհանուր իրավասության դատարանին: Մյուս բոլոր դեպքերում, հանրային իրավահարաբերություններից բխող բոլոր գործերը ենթակա են քննության վարչական դատարանում (այս մասին ՀՀ վարչական վերաքննիչ դատարանը իրավական դիրքորոշում է հայտնել ՎԴ/2450/05/11 գործով 15.07.2011թ. որոշմամբ): ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 78-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ «Վարչական դատարանը պարտավոր է հայցադիմումն ստանալու օրվանից հետո՝ մեկշաբաթյա ժամկետում, վարույթ ընդունել սույն օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ ներկայացված հայցադիմումը, եթե առկա չեն սույն օրենսգրքի 79-81-րդ հոդվածներով սահմանված՝ հայցադիմումը վերադարձնելու, դրա ընդունումը մերժելու կամ այն վերահասցեագրելու հիմքերը»:

Սույն օրենսգրքի 89-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի ուժով նախնական դատական նիստում վարչական դատարանը պարզում է հայցի առարկան և հիմքերը:

Այսպիսով, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 80-րդ հոդվածի 1-ին մասի 2-7-րդ կետերի պահանջների պահպանման դեպքում Դատարանը պարտավոր էր ամբողջությամբ վարույթ ընդունել ներկայացված հայցադիմումը (այն ներկայացված էր սահմանված պահանջների պահպանմամբ, հակառակ պարագայում հայցադիմումը մյուս մասով վարույթ չէր ընդունվի), որից հետո նախնական դատական նիստում

հնարավորություն կունենար պարզելու հայցի առարկան և հիմքերը, այնուհետև նոր միայն կկարողանար պարզել՝ արդյոք ներկայացված հայցի առարկան և հիմքերը բխում են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի պահանջներից, թե ոչ: Նշված գործողություններից հետո հնարավոր կլիներ հետևություն կատարել՝ ճանաչման հայցով պահանջվել է ճանաչել իրավունքի՝ որպես փաստի խախտումը, թե իրավահարաբերության առկայությունը կամ բացակայությունը: Բացի այդ, հայցվորները հնարավորություն կունենային հստակեցնելու իրենց հայցապահանջները, փոխելու հայցի առարկան ու հիմքերը (ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 88-րդ հոդված):

3.2 Դատարանը որոշմամբ տվել է որոշակիորեն իրարամերժ մեկնաբանություններ, մասնավորապես, դա վերաբերում է այն դիրքորոշմանը, ըստ որի « (...) սույն գործով կայացվելիք դատական ակտով ոստիկանության աշխատակիցների գործողությունների ոչ իրավաչափ ճանաչումը կարող է տեղի ունենալ <u>հայցվորների իրավունքների խախտման փաստը հաստատվելուց հետո</u> միայն, ինչը բխում է նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի իմաստից»: Քանի որ հայցադիմումը քննվում է ՀՀ վարչական դատարանում, հետևաբար այդ փաստը պետք է հաստատվի Դատարանում՝ գործի դատաքննության ընթացքում՝ Դատարանի կողմից, ուստի ստացվում է, որ ըստ հայտնված դիրքորոշման Դատարանը գործի դատաքննության ընթացքում *կարող է հաստատել հայցվորների իրավունքների խախտման փաստը, սակայն միաժամանակ չճանաչել այդ իրավունքների խախտումը:*

3.3 Դատարանի որոշման բովանդակությունից բխում է, որ Դատարանը գտել է՝ հայցվորների և ոստիկանության աշխատակիցների միջև իրավահարաբերություններ առկա չեն եղել:

Հայցվորները 2013 թվականի դեկտեմբերի 2-ի լուսաբացին շարունակել են գտնվել նստացույցի մեջ, այսինքն՝ շարունակել են դեռևս նոյեմբերի 28-ին սկսված <u>հավաքը</u>:

«Հավաքների ազատության մասին» ՀՀ օրենքի համաձայն հավաքի իրականացման ընթացքում հավաքի մասնակիցները և ոստիկանության աշխատակիցները կրում են փոխադարձ իրավունքներ և պարտականություններ, որոնց գործնական կիրառությունը ենթադրում է որոշակի իրավահարաբերությունների ծագում:

Բացի այդ, հավաքի ընթացքում ոստիկանության աշխատակիցների կողմից պարբերաբար նստացույցի վայրից հեռանալու պահանջով դիմելը[8] ինքնին փաստում է, որ հայցվորների և ոստիկանության աշխատակիցների միջև ծագել են վարչաիրավական հարաբերություններ (դրանք կարող են ծագել նաև այդ հարաբերությունների մասնակիցներից մեկի նախաձեռնությամբ), քանի որ տվյալ դեպքում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի ուժով ՀՀ ոստիկանությունը նույնպես հանդիսանում է վարչական մարմին: Դատարանը, որոշման մեջ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ իրավունքի խախտման առկայությունը կամ բացակայությունը դեռևս չի նշանակում իրավահարաբերության առկայություն կամ բացակայություն: Մինչդեռ, հայցվորների՝ հավաքների ազատության իրավունքի խախտումը ոստիկանության աշխատակիցների կողմից վկայում է իրավահարաբերությունների առկայության մասին, քանի որ իրենց պաշտոնեական լիազորությունները կատարելու ընթացքում ոստիկանության աշխատակիցները չէին

[8] Տես հավելված՝ 1 21.03.2014 թվականի հայցադիմում, «Սույն հայցի փաստական հանգամանքները», էջ 2

կարող խախտել հայցվորների հավաքների ազատության իրավունքը՝ առանց համապատասխան իրավահարաբերությունների մեջ մտնելու:

4. Վերաքննիչ բողոքի պահանջը

Հաշվի առնելով վերոգրյալը, ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 127-րդ հոդվածի 11-րդ, 130-րդ, 131-րդ և 132-րդ հոդվածների դրույթներով՝

Խնդրում ենք

Վերաքննիչ բողոքը բավարարել:

Վերացնել ՀՀ վարչական դատարանի թիվ ՎԴ/1847/0514 գործով 22.04.2014թ. միջանկյալ դատական ակտը՝ հայցադիմումի ընդունումը մերժելու մասով:

5. Կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը

- Հավելված1. 21.03.2014թ. հայցադիմումի պատճեն,
- Հավելված 2. 22.04.2014թ. որոշման պատճեն,
- Հավելված 3. Փոստային ծրարի պատճեն,
- Հավելված 4. Վերաքննիչ բողոքը պատասխանողներին և ստորադաս դատարան ուղարկելու փաստը հավաստող անդորրագրերի պատճենները,
- Հավելված 5. Լիազորագրերի պատճենները:

Բողոքաբերների ներկայացուցիչներ՝

Ա.Սաքունց

Ա.Չատինյան

07.05.2014թ.